Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հարապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Գովազդի մասին» Հայաստնաի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացրած առաջարկների (փաստաթղթային կոդ՝ Կ-289-20.09.2019-ՏՀ-011/0)

N	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	***2.***	***3.***	***4.***	***5.***	***6.***
1.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նախագծի հոդված 5-ի 8-րդ մասի 8-րդ կետ	«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծից հանել հոդված 5-ի 8-րդ մասի 8-րդ կետը, որով ծխախոտային	Ընդունվել է: Օրենքի նախագծում և նախագծի փաթեթի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հարապետության օրենքում լրացում և փոփոխություն	Ընդունվել է

			արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման արգելք է սահմանվում հանրային սննդի օբյեկտներում (ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ):	կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
2,	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետ	«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը առաջարկում ենք փաթեթից հանել:	Չի ընդունվել	Չի ընդունվել